ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՑԵՑ ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՄԻՔԱՅԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆԸ

Կիրակի, մայիսի 11-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց հերթական Ուխտի Պատարագը: Մայր Տաճարի օծման 1700-ամյակի փոնակատարությունների ծիրից ներս այս անգամ եկեղեցականաց դասի առաջնորդությամբ Սուրբ Էջմիածին էր եկել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Շիրակի թեմի ուխտապահ ժողովուրդը: Օրվա պատարագիչն էր թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Միքայել եպս. Աջապահյանը:

«Ողբա՜ն շնորհակալ ու երախտապարտ ենք մեր հայրերին, մեր նախահայրերին, որ մեր Հայաստան աշխարհում կառուցեցին մի փաճար, մի փուն, որ երբեք չի հնանում, տնկեցին մի ծառ, որ երբեք չի չորանում, և Ավետարանի կենարար աղբյուրից մի ակունք բխեցրեցին, որ երբեք չի ցամաքում: Եվ այդ ամենը խտացնում ենք այն խորհրդի մեջ, որ անվանում ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածին: ... 1700 տարիներ շարունակ Ս. Էջմիածինը եղել է գառնուկը գայլերի ոռմակների մեջ, բայց կարողացել է պահել իր ինքնությունը, պահել իր հնադարյան դուռը, պահել իր հավատքը, պահել իր խոստովանությունը հանդեպ Քրիստոսի և նահատակության զնով կարողացել է իր ժողովրդին պաշտպանել և պահպանել բոլոր տեսակ փորձություններից: Եվ այո՛, Էջմիածինը գոյություն ունեցել է, ունի և ունենալու է հայ ժողովրդի համար»,- ասաց Սրբազան Հայրը:

Հանուն Նորին Սրբության և Մայր Աթոռի միաբանության ուխտավորներին ողջունեց նաև Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին Հայաստանի Հայ Կաթողիկե Եկեղեցու առաջնորդ Տ. Ներսես արքեպս. Ներսեսյանը, բարձրաստիճան հոգևորականներ, Շիրակի մարզպետ Ֆելիքս Փիրումյանը, մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, Գյումրիի ընծայարանի սաներ:

Հավարտ Ս. Պատարագի ուխտավորների բազմությանը Վեհարանում ընդունեց Վեհափառ Հայրապետը: